

ՕՏԱՐ
ԼԵԶՈՒՆԵՐԸ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԴՊՐՈՑՈՒՄ

8

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԳՊՐՈՑՈՒՄ

Գիտական աշխատությունների
ժողովածու

8

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2007

ՀՏԴ 802/809

ԳՄԴ 81.2

0 – 780

Երաշխավորվում է Երևանի պետական
համալսարանի ռոմանագերմանական
բանասիրության ֆակուլտետի խորհրդի կողմից

Խմբագրական կոլեգիա՝

Ե.Լ.Երզնկյան /պատասխանատու խմբագիր/,
Կ.Մ.Կարապետյան,
Ա.Մ.Բաբայան,
Ն.Մ.Թովմայան

0 – 780

Օտար լեզուները բարձրագույն դպրոցում: Գիտական
աշխատությունների ժողովածու. - Եր.: Երևանի պետական
համալս. հրատ., 2007թ., 308 էջ:

Ժողովածուն ընդգրկում է լեզվաբանության տարբեր խնդիրներին, ինչպես նաև
օտար լեզվի դասավանդման մեթոդիկային վերաբերող հոդվածներ: Ուսումնասիրվում
են մասնավորապես իմաստաբանության, քերականության, ոճաբանության և
ներկայումս լայն տարածում գտած գործաբանական լեզվաբանության հարցեր:

Ժողովածուն նախատեսվում է ընդհանուր և ռոմանագերմանական բանա-
սիրությամբ զբաղվող մասնագետների և օտար լեզու դասավանդողների համար:

ԳՄԴ 81.2

ISBN 978 – 5 – 8084 – 0897 - 5

© Հեղ. կոլեկտիվ. 2007թ.

ԱՆՆԱ ՊԱՊՈՅԱՆ
Մարինա ՄԿՐՏՉՅԱՆ
Իրինա ԲՈՒՌՆԱՉՅԱՆ

Երևանի պետական համալսարան

ՀԱՅԵՐԵՆԻՑ ԱՆՂԼԵՐԵՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՏՐԱՆՍՅԵՐԻ
(ՓՈԽԱՆՑՄԱՆ) ՓՈՐՉԱՐԱՐԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՉ

XX դարի վերջին տասնամյակները նշանավորվեցին միջնադարից իջած ուսումնասիրությունների նկատմամբ հատուկ ուշադրությամբ, որը պայմանավորված է գլոբալիզացիայի ազդեցությամբ ոչ միայն հասարակական-քաղաքական կյանքում, այլև կրթական և գիտական ոլորտներում: Մեզանում ևս գլոբալիզացիան արդեն դարձել է իրականություն և երևան են եկել որոշ խնդիրներ, որոնք անմիջականորեն առնչվում են կրթության բնագավառին, հատկապես օտար լեզուների դասավանդման գործընթացին:

ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 2 ամբիոնի դասախոսներ՝ Ա. Պապոյանը, Մ. Սկրտչյանը, Ի. Բուռնազյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Բաբայանը ամբիոնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Ե. Երզնկյանի ղեկավարությամբ կատարեցին գիտափորձ հայերենից անգլերեն լեզվական տրանսֆերի վերաբերյալ:

Գիտափորձը նպատակ է հետապնդել հայտնաբերել հայերենի ազդեցությունը անգլերեն ուսումնասիրելիս հետևյալ ոլորտներում՝ հնչյունաբանություն, բառակազմություն, ձևաբանություն, շարահյուսություն և դիսկուրս: Հնչյունաբանության ոլորտի փորձարարական արդյունքներին կարելի է ծանոթանալ Ա. Բաբայանի հոդվածներում (Armenian Folia Anglistika, 2007, N 3; Օտար լեզուները Հայաստանում, 2007, N 3-4 (տպ.)):

Գիտափորձն իրականացվել է Երևան քաղաքի Ջ. Կիրակոսյանի անվան թիվ 20 և Ա. Պուշկինի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցների 9 և 10 դասարաններում, ինչպես նաև Գավառի պետական համալսարանի հաշվապահական հաշվառում և աուդիտ, տարրական կրթություն և մեթոդիկա, ֆինանսներ և

վարկ, բիզնեսի կազմակերպում և կառավարում ֆակուլտետներում և Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի անգլիական բանասիրության և տարրական կրթության և մեթոդիկայի ֆակուլտետներում:

Գիտափորձին մասնակցել են շուրջ 250 ուսանող և աշակերտ:

Դպրոցական աշակերտներին առաջարկվել է Pre-Intermediate մակարդակի թեստ բաղկացած հետևյալ առաջադրանքներից.

1. Ավարտել և վերնագրել տեքստը: Այս հանձնարարության նպատակն է ստուգել տեքստի ըմբռնման աստիճանը և տեքստին տրամաբանական ավարտ տալու կարողությունը:

2. Տրված տարբերակներից ընտրել ճիշտ բառը: Այս առաջադրանքը հնարավորություն է տալիս ստուգել հայերենի բառակազմական կանոնների ազդեցության աստիճանը անգլերենի բառակազմական կանոնների կիրառման վրա, ինչպես նաև ճիշտ տարբերակն ընտրելու ուսանողի կարողությունը, կիրառելով բազմակի ընտրության ստուգման մեթոդը:

3. Ընտրել առաջարկված նախադասություններից այն տարբերակը, որը չի արտահայտում անգլերեն նախադասության բովանդակությունը: Այս առաջադրանքի նպատակն է ստուգել առաջարկված որոշակի կառուցվածքային ըմբռնումը լեզվում: Օրինակ, նախադասության մեջ բազմիմաստ նախդիրների տեղի և իմաստի անհամապատասխանությունները հայերենում և անգլերենում, ինչպես նաև հարցական նախադասություններում օժանդակ բայի կիրառումը:

4. Ընտրել քերականորեն ճիշտ կազմած տարբերակը: Այս առաջադրանքի նպատակն է բացահայտել հայերենի շարահյուսական կանոնների իմացության ազդեցությունը անգլերեն նախադասություն կազմելիս (պարզ ընդարձակ նախադասության շարադասությունը, անդեմ նախադասության շարադասությունը, որոշիչ երկրորդական նախադասության տեղը, ինչպես նաև անգլերենում երկակի ժխտման հետ կապված շարադասության խնդիրները):

Բուհերի ուսանողներին առաջարկվել է Intermediate մակարդակի թեստ, որը բաղկացած է հետևյալ առաջադրանքներից՝

1. Տեքստի տարբեր հատվածները կարգել ըստ հերթականության և վերնագրել այն: Այս առաջադրանքի նպատակն է ստուգել բնագիր տեքստում առաջարկված երեվույթին ուսանողի իրազեկ լինելու աստիճանը և տեքստը ճիշտ կապակցելու ուսանողի ունակությունը:

2. Ընտրել բառային ճիշտ տարբերակը, ինչը ենթադրում է ստուգել հայերենի բառակազմական կանոնների ազդեցության աստիճանը անգլերենի բառակազմական կանոնների կիրառման վրա, ինչպես նաև ճիշտ տարբերակը ընտրելու ուսանողի կարողությունը:

3. Տրված նախադասություններից ընտրել ճիշտ տարբերակը: Այս առաջադրանքի նպատակն է բացահայտել հայերենի շարահասական կանոնների իմացության ազդեցությունը անգլերեն նախադասություն կազմելիս (պարզ ընդարձակ նախադասության շարահյուսությունը, անդեմ նախադասության շարահյուսությունը, որոշիչ երկրորդական նախադասության տեղը, ինչպես նաև հայերենում երկակի ժխտման շարահյուսության խնդիրները):

4. Առաջարկված թեմայի շուրջ գրել շարադրություն, օգտագործելով 150-200 բառ: Այս առաջադրանքը կրում է ստեղծագործական բնույթ և ներառում է հետևյալ ենթա-առաջադրանքներ՝ ա. գրել շարադրություն առաջարկված թեմայի շուրջ, բ. շարունակել և ավարտել երկխոսությունը, գ. նկարագրել առաջարկված պատկերը, դ. կազմել երկխոսություն առաջարկված թեմայի շուրջ, ե. առաջարկված նախադասություններից կատարել տրամաբանական եզրահանգում:

Մխալների վիճակագրական արդյունքները ամփոփված են հետևյալ աղյուսակներում՝

Աղյուսակ 1. Գավառի պետական համալսարան

	Յաշվապահական հաշվառում և աուդիտ (11 աշխատանք)	Տարրական կրթություն և մեթոդիկա (8 աշխատանք)	Ֆինանսներ և վարկ (23 աշխատանք)	Քիզնես կազմակերպում և կառավարում (19 աշխատանք)
text cohesion	11	8	23	17
Noun-forming suffixes	20	23	30	37
Negative prefixes	3	8	2	11
Adjective-forming suffixes	1		1	9
Tense	6	3	9	5
Double subject				1
Subject-verb agreement	1	1		3
S-V-O	5	3	8	5
Relative clauses	3	1	2	2
Adjective + noun	6	1		2
Noun (plural)	1	3	9	3
Adjective-adverb confusion	3			2
Article				1
Noun-verb confusion	1		1	5
Word order (adv. Modifiers)	3	8	4	5
Adjective-noun confusion	1		1	3

Քանի որ, հոդվածի սահմաններում հնարավոր չէ ամփոփել և ներկայացնել վերոհիշյալ ասպեկտները մանրամասնորեն, ուստի ներկայացված են թեստավորման ընթացքում բացահայտած սխալների վերլուծությունը ձևաբանության, շարադասության և դիսկուրսի բնագավառներում:

Գիտափորձի արդյունքները ցույց են տալիս, որ լեզվական տրանսֆերի գործոնը ամենացայտուն կերպով հանդես է գալիս այն առաջադրանքներում, որոնց նպատակն է բացահայտել լեզվական տրանսֆերի գործոնը անգլերեն լեզվի շարահյուսական կառույցներում: Քանի որ հայերենի շարահյուսությունը, ի տարբերություն անգլերենի, կայուն չէ, առաջին իսկ սխալները նկատվում են ենթակա-ստորոգյալ-խնդիր շարադասության մեջ:

**Աղյուսակ 2. Վանաձորի պետական մանկավարժական
համալսարան**

	Անգլիական բանասիրության ֆակուլտետ 1-ին կուրս (37 աշխատանք)	Տարրական կրթություն և մեթոդիկա (16 աշխատանք)	Անգլիական բանասիրության ֆակուլտետ 4-րդ կուրս (29 աշխատանք)	Անգլիական բանասիրության ֆակուլտետ 3-րդ կուրս (13 աշխատանք)	Անգլիական բանասիրության ֆակուլտետ 2-րդ կուրս (19 աշխատանք)
text cohesion	17	9	11	7	12
Noun-forming suffixes	22	15	16	9	18
Negative prefixes	2	5	6	2	9
Adjective-forming suffixes	2		3	3	7
Tense	9	4	9	2	3
Double subject					1
Subject-verb agreement	2	3		3	2
S-V-O	8	3	7	4	4
Relative clauses	2	1	4	1	1
Adjective + noun	9	1		1	2
Noun (plural)	2	3	8	2	3
Adjective-adverb confusion	4	2		1	2
Article	16	3		2	1
Noun-verb confusion	1		1		5
Word order (adv. Modifiers)	4	6	6	7	5
Adjective-noun confusion	3	2	2	1	3

Աղյուսակ 3. Միջնակարգ դպրոցներ

	Զ. Կիրակոս- յանի անվան թիվ 20 միջնակարգ դպրոց 9-րդ դաս. (18 աշ- խատանք)	Ի. Կիրակոս- յանի անվան թիվ 20 միջնակարգ դպրոց 10-րդ դաս. (21 աշ- խատանք)	Պուշկինի անվան թիվ 8 միջնակարգ դպրոց 9-րդ դաս. (25 աշ- խատանք)	Պուշկինի անվան թիվ 8 միջնակարգ դպրոց 10-րդ դաս. (22 աշ- խատանք)
Noun-forming suffixes	9	12	8	7
Negative prefixes	2	3	2	2
Adjective- forming suffixes	3	4	2	3
Subject-verb agreement	1	2	1	
S-V-O	3	5	4	3
Relative clauses	2	2	1	2
Noun (plural)	1			
Article	3	4	3	2
Word order (adv. Modifiers)	2	4	1	2

Հայերենում հնարավոր են հետևյալ կառույցները՝ *S-V-O*, *S-O-V*, *O-S-V*, *V-S-O*: Օրինակ՝

Քաղաքագետ թոմ Վայթը քաղաքական հարցի շուրջ կտրուկ կարծիք հայտնեց, որի հետ նախագահը չհամաձայնվեց:
Իսկ անգլերենում հնարավոր է միայն *S-V-O* տարբերակը /միայն բառացի թարգմանությամբ/, ինչպես օրինակ՝

Tom White (S), an expert in politics, expressed (V) some strong political views on a subject (O) which the president disagreed with.

Անգլերեն լեզվի բայական ժամանակաձևերը, հոդը և գոյականը այն ասպեկտներն են, որոնք ամենահաճախ հանդիսանում են համեմատության առարկա: Ամենախրթին և դժվար հարթահարելի ժամանակաձևերն են՝ Present Perfect vs. Past Simple, Present Continuous vs. Present Simple, Present Continuous vs. Future Simple, Past Perfect vs. Past Perfect. Future Continuous vs. Fu-

ture Perfect: Այն փաստը, որ որոշ լեզվական երևույթներ կարող են ունենալ ավելի քան մեկ համեմատելի ասպեկտ մայրենի լեզվի հետ նույնպես բարդություն է հանդիսանում անգլերեն լեզվի ուսանմասիրության ընթացքում:

Անգլերեն լեզու ուսումնասիրողների համար առանձնակի դժվարություն է որոշյալ և անորոշ հոդերի կիրառումը, հատկապես գոյականի հոգնակի թվի դեպքում, երբ ուսումնասիրողը տրամաբանական է համարում այն փաստը, որ անորոշ հոդը հոգնակի թվում փոխարինվում է որոշյալ հոդով: Չուտ գոյականի հետ կապված դժվարություններից է նաև այն, որ որոշ գոյականներ անգլերեն լեզվում ունեն միայն հոգնակի թիվ, այնինչ մայրենի լեզվում նույն գոյականը ունի և՛ եզակի, և՛ հոգնակի թիվ: Օրինակ՝ scissors, spectacles և այլն:

Intermediate մակարդակի թեստի առաջադրանքներից մեկը ուսանողին առաջարկում է տեքստի հատվածները կարգել ըստ հերթականության և վերնագրել այն: Ինչպես ցույց են տալիս թեստավորման վերլուծության արդյունքները, ուսանողների գերակշիռ մասը չի հաղթահարել այս առաջադրանքը: Վերոհիշյալ առաջադրանքի թերի կատարումը կապված է մի շարք հանգամանքների հետ: Առաջինն այն է, որ ուսանողների մեծ մասը իրագրել չեն բնօրինակ տեքստում առաջարկված թեմաներին՝ երազների հոգեբանական վերլուծությանը և համակարգչային խաղերի հոգեբանական ազդեցությանը նվիրված ժամանակակից ուսումնասիրություններին:

Այս առաջադրանքի թերի կատարումը ուղղակիորեն կապված է նաև տեքստում օգտագործված բառերի և բառակապակցությունների չիմացության հետ: Օրինակ՝ to digest the information, to sleep on the problem, eye of the needle և այլն:

Առաջարկված տեքստի սխալ ըմբռնումը և կապակցումը տրամաբանորեն բերել է նաև տեքստի սխալ վերնագրմանը:

Pre-intermediate և Intermediate մակարդակի թեստերը ընդգրկում են նաև բառակազմությանը վերաբերող բազմակի ընտրությամբ առաջադրանք (multiple choice), որտեղ ուսանողը պետք է կարողանա ճիշտ ընտրել հայերենի մի քանի ածանցների և նախածանցների իմաստը արտահայտող համապատասխան ածանցներ և նախածանցներ անգլերենում: Արդյունքների

վերլուծությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ սխալների առկայությունը կապված է որոշ խնդիրների հետ: Օրինակ՝ հայերենի *-ություն* վերջածանցին անգլերենում կարող են համապատասխանել ավելի քան մեկ վերջածանցներ, ինչպես օրինակ՝ -ism, -tion, -ance, -ence, -ment, —hood, -dom, -ity, -ness, -ry, կամ էլ հայերենի ժխտական՝ *տ-, դժ-, ան-* նախածանցներին անգլերենում կարող են համապատասխանել՝ *un-, in-, im-, il-, ir-, dis-* նախածանցները: Այս առաջադրանքի թերի կատարումը կապված է նյութին ոչ լիովին իրազեկ լինելու հետ, որն էլ հանգեցրել է նշված ածանցների և խոսքի մասերի սխալ կիրառմանը:

Սույն հոդվածում ամփոփ ներկայացվեց ուսումնասիրությունների արդյունքում ստացված տվյալների վիճակագրական վերլուծությունը: Հետագայում այս արդյունքները պետք է ուսումնասիրվեն ըստ վերոհիշյալ ոլորտների և կարող են հիմք հանդիսանալ ավելի խորը վերլուծության համար, որտեղ անհրաժեշտ կլինի նաև հաշվի առնել հոգեբանական, տարիքային ինչպես նաև տարածքային գործոնները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Adjemian Ch. Accounting for Adult Acquisition of Relative Clauses: Universal Grammar, L1, and Structuring the Intake. In: *Universals of Second Language Acquisition*, ed. by Fred Eckman, Lawrence Bell and Diane Nelson. Rowley, Mass.: Newbury House, 1983.
2. Corder S. Pit A Role for the Mother Tongue. In: *Language Transfer in Language Learning*, ed. by Susan Gass and Garry Selinker. Rowley, Mass.: Newbury House, 1983.
3. Jordens P. Rules, Grammatical Intuitions and Strategies in Foreign Language Learning. In: *Interlanguage Studies Bulletin*. N2, 1977.
4. Kellerman E. Toward a Characterization of the Strategy of Transfer in Second Language Learning. In: *Interlanguage Studies Bulletin*. N2, 1977.